

« Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 27/1

29 մայիսի 2013թ.

Քննարկվեց «Տաքսի Պրեստիժ» ՍՊԸ 15.04.2013թ-ի գրությամբ բերված գանգատը « ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ 08.04.2013թ-ի թիվ 1103441 ստուգման ակտի դեմ:

Համաձայն « ԿԱ ՊԵԿ նախագահի 13.03.2013թ-ի թիվ 1103441 հանձնարարագրի «Տաքսի Պրեստիժ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) իրականացվել է աշխատողի աշխատանքի ընդունումը « օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության, ինչպես նաև օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է Մաշտոցի ՀՏ 08.04.2013թ-ի թիվ 1103441 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 2.221.600 դրամ:

«Տաքսի Պրեստիժ» ՍՊԸ բողոքում մասնավորապես նշված է.

«Տաքսի Պրեստիժ» ՍՊԸ-ն ստուգման ակտով առաջադրված պարտավորությաններն ընդունում է մասնակիորեն, ինչի կապակցությամբ ստորև ներկայացվում են առաջադրված պարտավորությունների մի մասի հետ չհամաձայնվելու՝ ընկերության հիմնավորումներն ու փաստարկները:

Ստուգման ակտի 1-ին կետում տառացիորեն նշված է հետևյալը. «համադրելով «Տաքսի Պրեստիժ» ՍՊԸ-ում փաստացի աշխատանքային գործունեություն իրականացնող անձանց առկա աշխատանքային պայմանագրերը՝ պարզվեց, որ փաստացի աշխատանքային գործունեություն են իրականացնում հետևյալ յոթ աշխատակիցները՝ Ավետ Ավետիսյան, Արսեն Բեղոյան, Վահրամ Բուդաղյան, Ռաֆայել Խաչատրյան, Ստյոպա Հայրապետյան, Արմեն Շնավոնյան և Հովհաննես Գասպարյան, որոնց աշխատանքի ընդունումը « օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր ձևակերպված չէր, բացակայում էին գրավոր աշխատանքային պայմանագրերը և աշխատանքի ընդունման մասին գրավոր հրամանները»:

Վերոնշյալի կապակցությամբ հայտնում ենք, որ « օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպված աշխատող բացահայտելու համար անհրաժեշտ է փաստացի աշխատանք կատարող անձանց տվյալները համադրել աշխատանքի ընդունումը սահմանված կարգով ձևակերպելու համար օրենսդրությամբ պահանջվող փաստաթղթերի առկայության հետ: Այս առումով անհասկանալի է, թե ինչպես են հարկային մարմնի աշխատակիցները կատարել անհրաժեշտ համադրումները այն դեպքում, եթե ստուգման ակտում նշված վերոնշյալ անձինք ստուգման ողջ ընթացքում ընկերության գրասենյակում երբևէ չեն եղել: Ընդ որում, ստուգման ակտում որևէ կերպ նկարագրված չէ աշխատողի աշխատանքի ընդունումը « օրենսդրությամբ սահմանված կարգով չձևակերպելու խախտումը բացահայտելու ընթացակարգը, և չկան այդ խախտումները հիմնավորող որևէ փաստական հիմքեր:

Այդուհանդերձ, ընկերությունը ընդունում է, որ ստուգման պահին ունեցել է օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցված՝ թվով հինգ աշխատակիցներ (Ավետ Ավետիսյան, Արսեն Բեղոյան, Ռաֆայել Խաչատրյան, Ստյոպա Հայրապետյան և Հովհաննես Գասպարյան), իսկ ստուգման ակտում արձանագրված՝ Վահրամ Բուդաղյանը և Արմեն Շնավոնյանը ստուգման պահին ընկերության համար փաստացի աշխատանք կատարելիս չեն եղել, քանի որ նրանց կցված ավտոմեքենաները (պետհամարանիշերը՝ L0391, L3229), ս.թ. փետրվարի 25-ից մինչև մարտի 31-ը տեխնիկական անսարքությունների պատճառով գտնվել են «Քեթրին Գրուպ» ՍՊԸ-ի տեխնիկական սպասարկման կենտրոնում: Հետևաբար ստուգման պահին՝ ս.թ. մարտի 25-ից մինչև մարտի 27 ընկած ժամանակահատվածում,

շահագործվել չէին կարող (կից ներկայացվում է <Քեթրին Գրուպ> ՍՊԸ-ի կողմից տրամադրված տեղեկանքը, որով հավաստվում է ներկայացված տեղեկատվությունը):

Նույն հիմնավորմամբ ընկերությունն ընդունելի չի համարում նաև վերոնշյալ երկու ավտոմեքենաների մասով արտոնագրային վճարի գծով առաջադրված լրացուցիչ պարտավորությունները:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

Հաշվի առնելով վերոնշյալն ընկերությունը խնդրում է քննության առնել ստուգման ակտը և վերահաշվարկել դրանով առաջադրված լրացուցիչ պարտավորությունների մեծությունը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկել է եզրակացության, որ ընկերության գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Քննարկման ընթացքում ստուգումն իրականացրած պաշտոնատար անձինք պնդեցին, որ ստուգման ընթացքում համադրելով <Տաքսի Պրեստիժ> ՍՊԸ-ում փաստացի աշխատանքային գործունեություն իրականացնող անձանց առկա աշխատանքային պայմանագրերը պարզվել է, որ փաստացի աշխատանքային գործունեություն են իրականացնում աշխատակիցներ Ավետ Ավետիսյանը, Արսեն Բեղոյանը, Վահրամ Բուդաղյանը, Ռաֆայել Խաչատրյանը, Ստյոպա Հայրապետյանը, Արմեն Շմավոնյանը և Հովհաննես Գասպարյանը, սակայն վերջիններիս աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր ձևակերպված չի եղել: Մասնավորապես, բացակայել են նշված աշխատակիցների գրավոր աշխատանքային պայմանագրերը և աշխատանքի ընդունման մասին գրավոր հրամանները:

Հարկ է նշել, որ ընկերության վերագրյալ աշխատակիցների ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված չլինելու փաստն արձանագրվել է ստուգման ընթացքում կազմված արձանագրություններով:

Ինչ վերաբերվում է ընկերության գանգատում նշված այն պնդմանը, որ ստուգման ակտում արձանագրված Վահրամ Բուդաղյանը և Արմեն Շմավոնյանը ստուգման պահին ընկերության համար փաստացի աշխատանք կատարելիս չեն եղել, քանի որ նրանց կցված ավտոմեքենաները գտնվել են տեխնիկական սպասարկման կենտրոնում, ապա նշվեց հետևյալը:

Ստուգման ընթացքում՝ 26.03.2013թ-ին, կազմվել են արձանագրություններ, որոնցով արձանագրվել են ընկերության աշխատակիցներ Վահրամ Բուդաղյանի և Արմեն Շմավոնյանի փաստացի աշխատանքային գործունեություն իրականացնելու, սակայն վերջիններիս աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված չլինելու փաստը: Նշված արձանագրությունները ստուգումն իրականացնող անձինք կազմել են ընկերության տնօրենի մասնակցությամբ, վերջինիս կողմից դրանք կնքված և ստորագրված են: Ընդ որում հարկ է նշել, որ 26.03.2013թ-ի արձանագրության համաձայն, Վահրամ Բուդաղյանը ստուգման ընթացքում ներկայացել է ոչ թե որպես վարորդ, այլ՝ հեռախոսավար:

Հարկ է նշել, որ Հանձնաժողովի 30.04.2013 թ-ի նիստի քննարկման արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն ստուգման ակտը թողնվել է անփոփոխ:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝

Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է հետևյալ եզրակացությունը:

<Տաքսի Պրեստիժ> ՍՊԸ-ի կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ 2013 թվականի ապրիլի 8-ի թիվ 1103441 ստուգման ակտի վերաբերյալ ներկայացված դիմում-գանգատը համարել հիմնավոր, իսկ դրա վերաբերյալ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից գանգատարկման խորհուրդ ներկայացված որոշման նախագիծը՝ ոչ հիմնավոր՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ստուգման ակտով որպես օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցված վարձու աշխատող արձանագրված յոթ անձանցից երկուսի մասով գանգատարկման խորհուրդ ներկայացված փաստաթղթերով հիմնավորվել է <Տաքսի Պրեստիժ> ՍՊԸ-ի մոտ օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցված վարձու աշխատողներ չլինելու հանգամանքը:


Հանձնաժողովը վերանայելով սույն գործին առնվող նյութերն ու ապացույցները, ինչպես նաև հաշվի առնելով Գանգատարկման խորհրդի եզրակացությունը գտնում է, որ ստուգման ակտի 1-ին կետով լրացուցիչ առաջադրված պարտավորությունը ենթակա է վերահաշվարկման: Մասնավորապես, վերահաշվարկման արդյունքում ղեկավարվելով <Եկամտային հարկի մասին> ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի <բ> կետի դրույթներով, ստուգման ակտի 1-ին կետով լրացուցիչ առաջադրված պարտավորության չափը օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցված թվով հինգ վարձու աշխատողների մասով կկազմի ընդամենը 750.000 դրամ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ 08.04.2013թ-ի թիվ 1103441 ստուգման ակտի 1-ին կետից նվազեցնել ընդամենը 1.350.000 դրամ:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ